Զոհրակ Ապրեսյան
Եվրասիա միջազգային համալսարանի դասախոս,
իրավաբանական գիտությունների թեկնածու
Էլ. հասցե՝ zohrak.apresyan@gmail.com
DOI: 10.53614/18294952-2022.2-17

ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՆԱԽԱԴԱՏԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ՝ ՄԻՄՅԱՆՑ ՀԱԿԱՍՈՂ ՕՐԻՆԱԿԱՆ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏԱԾ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Անձի արդար դատաքննության իրավունքի երաշխիքն է հետագայում կայացվելիք և օրինական ուժի մեջ մտած դատական ակտի կատարումը, առանց որի դատարանների գործունեության նշանակությունն ամբողջապես կիմաստազրկվի: Դրա համար պետք է փորձել բացառել իրար հակասող օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի առկայությունը: Հոդվածում խոսվում է դատական ակտերի նախադատելիության ինստիտուտի, դրա նախատեսման նպատակների մասին, ինչպես նաև ներկայացվում են վերլուծություններ միմյանց հակասող օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի առկայության դեպքում դատական ակտերի նախադատելիության և պարտադիրության հատկանիշների գործողության վերաբերյալ: Աշխատանքում ներկայացվում են նախադատելիության ինստիտուտի օրենսդրական կանոնակարգման բացերը, դրանց արդյունքում հնարավոր անբարենպաստ հետևանքները: Առկա խնդիրների մատնանշմանը զուգահեռ՝ հոդվածում ներկայացվում են դրանց լուծմանն ուղղված առաջարկներ: Միևնույն ժամանակ խոսվում է քաղաքացիական դատավարությունում նախադատելիության ինստիտուտը կարգավորող օրենսդրական նորմերի սահմանադրականության հարցի մա-

սին:

Հիմնաբառեր. նախադատելիություն, պարտադիրություն, եզրափակիչ դատական ակտ, օրինական ուժ, իրավական որոշակիություն, դատական ակտի կատարում:

Ներածություն

Դատական ակտերի նախադատելիության ինստիտուտը էական նշանակություն ունի դատական ակտերի կայունության և պատշաճ կատարման ապահովման, ապացուցման տեսանկյունից դատական պրոցեսի թեթևացման համար: Առաջին հայացքից՝ այդ ինստիտուտի անխափան աշխատանքը որևէ հարցեր չի առաջացնում, սակայն պրակտիկայում հնարավոր են դեպքեր, երբ դատարանը, տեղյակ չլինելով մեկ այլ գործով օրինական ուժի մեջ մտած և իր կողմից քննվող գործի համար նշանակություն ունեցող փաստի հաստատված լինելու մասին, կայացնում է դատական ակտ, որն ըստ էության հերքում է այլ դատական ակտով հաստատված փաստը: Նման իրավիճակներում իրար հակասող օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը կատարվել չեն կարող, իսկ պրակտիկայում պետք է բացառվի կատարման համար ոչ պարտադիր դատական ակտի առկայության հնարավորությունը:

Մեթոդը

Աշխատանքի իրականացման ժամանակ օգտագործվել են իրավահամեմատական, իրավավերլուծական և էմպիրիկ մեթոդները:

Օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտի նախադատելիության հատկանիշի օրենսդրական սահմանման նպատակները

Տեսության մեջ անդրադառնալով օրինական ուժի մեջ մտած գործն ըստ էության լուծող դատական ակտերի հատկանիշներին, ի թիվս այլնի, առանձնացնում են դրանց պարտադիրության և նախադատելիության ինստիտուտները:

Նախադատելիությունը համակցվում է վճռի պարտադիրության հետ, և համաձայն դրան՝ օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատված փաստերը չեն կարող կասկածի տակ դրվել կամ կրկին հետազոտվել նույն անձանց մասնակցությամբ մեկ այլ գործով (Պետրոսյան, 2012, էջ 415):

Նախադատելիությունը նշանակում է որոշակի սահմաններում ապացուցման պարտականությունից ազատում, կրկնակի ապացուցման կամ նման հանգամանքները հետագա դատավարություններում հերքելու արգելք (Մեղրյան, 2020, էջ 151):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 61-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նախկինում քննված **քաղաքացիական,** սնանկության կամ վարչական գործով դատարանի՝ **օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտով** հաստատված գործի քննության

համար նշանակություն ունեցող փաստերը գործին մասնակցող նույն անձանց մասնակցությամբ այլ գործ քննելիս **կրկին չեն ապացուցվում:**

Միևնույն ժամանակ Օրենսգիրքը սահմանում է, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը պարտադիր են հասցեատերերի համար և ենթակա են կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում (Օրենսգրքի 5-րդ հոդված, 5-րդ մաս):

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով դատական ակտերի նախադատելիության հատկանիշի օրենսդրական ձևակերպման նպատակին, իր մի շարք որոշումներում արձանագրում է. «(...) նախադատելիության ինստիտուտը կարևոր նշանակություն ունի դատական խնայողության սկզբունքի ապահովման և դատական ակտերի **միջև անհաղթահարելի հակասությունների կանխարգելման առումով:** Մասնավորապես՝ այն մի կողմից կոչված է պարզեցնելու խախտված իրավունքները վերականգնելու դատավարական կարգը՝ ազատելով կողմերին **նույն փաստը կրկին ապացուցելու պարտականությունից**, մյուս կողմից կոչված է ***բացառելու միևնույն փաստերի տարբեր, հակասական գնահատումը, որը կարող է հանգեցնել իրավական որոշակիության սկզբունքի խախտման:***

Նախադատելիության ինստիտուտի նպատակն է պարզեցնել ապացուցման գործընթացը, այն է՝ ***միևնույն փաստը մեկ անգամ մեկ այլ դատարանի կողմից հաստատված լինելու դեպքում կողմերին և դատարանին ազատել այդ փաստերը հաստատելու գործընթացը կրկին կատարելու բեռից:***

(...) Որպես կանոն, դատական ակտերի պրեյուդիցիալ կապը ենթադրում է դատական ակտի նախադատելիության տարածում ամբողջ ծավալով թե՛ գործին մասնակցող անձանց, **թե՛ դատարանի վրա»** (Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի փետրվարի 21-ին թիվ ԵԿԴ/1274/02/13 քաղաքացիական գործով կայացրած որոշում):

«Պարտադիրության հատկանիշն...ենթադրում է, որ**պետական** և տեղական ինքնակառավարման **մարմինները**, իրավաբանական անձինք և քաղաքացիներն իրենց գործունեության ընթացքում պարտավոր են հաշվի առնել օրինական ուժի մեջ մտած դատական ակտը և **իրավունք չունեն տվյալ դատական ակտով կայացված հարցի վերաբերյալ կայացնելու նոր որոշում»** (ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ ԵԴ/9971/02/18 քաղաքացիական գործով 17.12.2020թ. կայացրած որոշում)**:**

Վերոգրյալ իրավական հիմնավորումներից հետևում է, որ եթե օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտով հաստատվում է որևէ փաստ, ապա նույն անձանց միջև մեկ այլ գործ քննելիս տվյալ փաստը համարվում է հաստատված, և դրա առկայությունը կրկին չի քննարկվում: Նախադատելիության ինստիտուտը կողմերի և դատարանի համար ժամանակ և լրացուցիչ ռեսուրսներ խնայելուց բացի՝ բացառում է նաև իրար հակասող օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի միաժամանակյա գոյությունը՝ սահմանելով, որ ավելի վաղ քննված գործով հաստատված փաստը պարտադիր է այլ դատարանների համար գործեր քննելիս: Ընդ որում՝ ավելի վաղ քննված

գործով կայացված և օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված փաստի պարտադիրության մասին է վկայում նաև դատական ակտի պարտադիրության հատկանիշը: Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն էլ ուղղակիորեն սահմանում է նախադատելի ուժ ունեցող դատական ակտով հաստատված փաստի պարտադիր լինելու հանգամանքը ոչ միայն գործին մասնակցող անձի, այլ նաև մեկ այլ գործ քննող դատարանի համար: Հետևապես, անկախ գործին մասնակցող անձանց ցանկությունից՝ դատարանը պետք է առաջնորդվի օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտի նախադատելիության հատկանիշով:

Օրենսդիրը, սահմանելով դատական ակտի նախադատելիության սկզբունքը, ի թիվս այլնի, նպատակ է հետապնդել **բացառելու** իրար հակասող երկու կամ ավելի օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի միաժամանակյա գոյությունը: Հակառակ պարագայում կստեղծվեր իրավիճակ, որի պայմաններում օրինական ուժի մեջ մտած ակտերից մեկը կամ բոլորը միաժամանակ հնարավոր չէ լինի կատարել, ինչն էլ կհանգեցներ իրավական որոշակիության սկզբունքի խախտման: Իրարամերժ փաստեր հաստատող օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտերն էական վտանգ կստեղծեն իրավական անվտանգության համար, կհանգեցնեն դատական իշխանության նկատմամբ վստահության կորստի և սուբյեկտիվ արդարադատության:

Օրինական ուժի մեջ մտած իրար հակասող եզրափակիչ դատական ակտերի միաժամանակյա գոյության խնդիրը և դրա վերացմանն ուղղված հնարավոր լուծումները

Բայցևայնպես, պրակտիկայում հնարավոր են դեպքեր, երբ, օրինակ, դատական սխալի արդյունքում առկա լինեն իրար հակասող օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտեր: Այդ թվում՝ դատական ակտի մասին տեղեկացված գործին մասնակցող անձինք, հնարավոր է, նույնպես դատարանին հայտնած չլինեն վիճելի փաստը հաստատող օրինական ուժի մեջ մտած դատական ակտի առկայության մասին: Այսինքն, անկախ պատճառից՝ պրակտիկայում ակնհայտորեն կարող են հանդիպել (հանդիպում են) իրարամերժ փաստեր հաստատող օրինական ուժի մեջ մտած գործն ըստ էության լուծող դատական ակտեր:

Հետևապես, եթե առանձին դեպքում հնարավոր չի եղել հասնել օրենսդրի կողմից սահմանված՝ իրար հակասող օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի բացառման նպատակին, ապա անհրաժեշտ է նաև պարզել, թե ինչպես է հնարավոր նման պայմաններում վերականգնել իրավական որոշակիությունը:

Կարծում ենք, որ նման դեպքերի համար Օրենսգրքի 61-րդ հոդվածն ընդհանրապես որոշակի չէ, և չի նախատեսում նման խնդրի ծագման ժամանակ դրա լուծման հստակ ընթացակարգ: Մասնավորապես, տվյալ հոդվածը չի սահմանում, թե իրար հակասող փաստեր հաստատող օրինական ուժի մեջ

մտած գործն ըստ էության լուծող դատական ակտերի առկայության դեպքում շահագրգիռ անձինք ինչպես կարող են իրականացնել իրենց իրավունքները: Արդյո՞ք նման պայմաններում պետք է գործի առաջինն օրինական ուժի մեջ մտած դատական ակտը, արդյո՞ք հետագայում օրինական ուժի մեջ մտած դատական ակտը պետք է վերացվի, և եթե այո, ապա ի՞նչ ընթացակարգով: Ընդ որում՝ տեսականորեն հնարավոր է նաև, որ իրար հակասող դատական ակտերն օրինական ուժի մեջ մտնեն նույն օրը: Արդյունքում, շահագրգիռ անձանց դատական պաշտպանության իրավունքի խախտումներից զատ՝ կրկին կստեղծվեն էական վտանգներ պետության իրավական անվտանգության համար, անհասկանալի իրավիճակ կստեղծվի նաև Հարկադիր կատարման ծառայության համար: Այդ թվում՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերից մեկը կարող է պարտադրել կատարելու որոշակի գործողություն, իսկ մյուսը՝ բացառել դրա կատարման հնարավորությունը: Արդյունքում՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը փաստացի կկորցնի իր պարտադիրության և կատարելիության հատկանիշները, իսկ դատական իշխանության գործունեությունը կդադարի լինել արդյունավետ:

Սահմանադրությամբ Հայաստանի Հանրապետությունը դիտարկվում է որպես իրավական պետություն, իսկ նման պետություններում օրենքները պետք է լինեն որոշակի, օրենքով պետք է նախատեսվեն մարդու հիմնական իրավունքների իրականացման պատշաճ ընթացակարգեր: ՀՀ Սահմանադրական դատարանն իր որոշումներում արձանագրում է. «...օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում **իրավական որոշակիության (res judicata)** սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը (թիվ ՍԴՈ-630 որոշում):

(...)Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար **կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ ակնկալիքները** (ՍԴՈ-1213)»:

Օրենսգրքի 61-րդ հոդվածի 2-րդ մասը չի սահմանում արդեն իսկ օրինական ուժի մեջ մտած երկու կամ ավելի եզրափակիչ դատական ակտերի առկայության դեպքում դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր: Հետևապես այն որոշակի չէ, և անհրաժեշտ է սահմանել նման իրավավիճակներում անձանց իրավունքների պաշտպանության արդյունավետ մեխանիզմներ: Առանց նման կարգավորումների՝ տվյալ նորմը չի համապատասխանում իրավական որոշակիության սահմանադրական պահանջներին, հետևապես՝ կարգավորման բացակայության պայմաններում պետք է դիտարկվի Սահմանադրությանը հակասող:

Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է նշել, որ վերոնշյալ հոդվածում առկա

են նաև որոշակի կարգավորումներ, որոնք կարող են հետագայում կանխորոշել սահմանման ենթակա անհրաժեշտ մեխանիզմների բովանդակությունը:

Այսպես, հաշվի առնելով այն հանգամանքը, որ նորմատիվ իրավական ակտի նորմը պետք է մեկնաբանել՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն **ընդունող մարմնի նպատակը**՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների **տառացի նշանակությունից** («Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդված) կրկին դիտարկենք Օրենսգրքի 61-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունը՝ ***նախկինում*** *քննված քաղաքացիական, անանկության կամ վարչական գործով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտով հաստատված գործի քննության համար նշանակություն ունեցող փաստերը գործին մասնակցող նույն անձանց մասնակցությամբ* ***այլ գործ քննելիս կրկին չեն ապացուցվում:***

Կարծում ենք՝ տվյալ դեպքում օրենսդիրը, նշված նորմում մատնանշելով, որ ***«նախկինում»*** *քննված գործով հաստատված փաստն «****այլ****» գործ քննելիս այլևս չի ապացուցվում,* սահմանել է, որ **ավելի վաղ** օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտը հաստատված փաստի տեսանկյունից ունի առավելություն հետագայում **այլ** գործով օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտի նկատմամբ: Այսինքն՝ եթե առկա են օրինական ուժի մեջ մտած երկու կամ ավելի իրար հակասող դատական ակտեր, ապա նախադատելի ուժ պետք է ունենա ավելի վաղ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված փաստը:

Ընդ որում՝ գտնում ենք, որ ավելի վաղ օրինական ուժի մեջ մտած դատական ակտին հակասող այլ դատական ակտը (այդ թվում՝ օրինական ուժի մեջ մտած) պետք է անկատար մնալուց բացի նաև բեկանվի վերադաս դատարանի կողմից՝ դատական ակտի պարտադիրության սկզբունքի ապահովման նպատակով, քանի որ չի կարող պրակտիկայում գոյություն ունենալ օրինական ուժի մեջ մտած, սակայն կատարման համար պարտադիր չհանդիսացող եզրափակիչ դատական ակտ:

Բոլոր դեպքերում Օրենսգրքի 61-րդ հոդվածն ունի հստակ կարգավորման կարիք, և անգամ նման առանձին լայն օրենսդրական մեկնաբանությունները ամբողջությամբ չեն պատասխանում վերևում բարձրացված հարցերին, իսկ ներկայումս նման պատային իրավիճակների ստեղծման պայմաններում օրենսդրությամբ լուծումներ նախատեսված չեն:

Եզրակացություն

Աշխատանքի իրականացման արդյունքում կարելի է կատարել հետևյալ եզրահանգումները.

1. թեև դատական ակտի նախադատելիության օրենսդրական սահմանման նպատակներից մեկը այնպիսի իրավիճակի բացառումն է, որում կարող են առկա լինեն իրար հակասող օրինական ուժի մեջ մտած երկու կամ ավելի եզրափակիչ դատական ակտեր, ամեն դեպքում նման իրավիճակի ստեղծումը պրակտիկ կյանքում հնարավոր է,

2. ինչպես Օրենսգրքի 61-րդ հոդվածում, այնպես էլ այլ դրույթներում առկա չէ անձանց համար իրավական որոշակիությանը համապատասխանող կարգավորում, որն ուղղակիորեն կկանոնակարգի նման իրավիճակում մարդու իրավունքի պաշտպանության եղանակները,
3. օրենսգրքի 61-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից կարելի է գալ նաև այն եզրահանգման, որ իրար հակասող օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի առկայության դեպքում պետք է գործի ավելի վաղ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը, սակայն, միևնույն է, բացակայում է տվյալ ակտի կատարումը և մյուս ակտի չկատարումն (այդ թվում՝ բեկանումը) ապահովող արդյունավետ ընթացակարգ,
4. հաշվի առնելով, որ տեսականորեն հնարավոր չէ բացառել իրար հակասող օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտերի միաժամանակյա գոյությունը, անհրաժեշտ է որոշակիորեն սահմանել նման իրավիճակների ստեղծման դեպքում դրա հաղթահարման միջոցները՝ առավելությունը տալով ավելի վաղ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի նախադատելիության և պարտադիրության հատկանիշներին:

Օգտագործված գրականության ցանկ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (2015 թվականի փոփոխություններով), ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 1118

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրք (ընդունված՝ 09.02.2018թ.), ՀՀՊՏ 2018.03.05/16(1374) Հոդ.208

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք (ընդունված՝ 21.03.2018թ.), ՀՀՊՏ 2018.03.28/23(1381) Հոդ.373

ՀՀ Սահմանադրական դատարանի թիվ ՍԴՈ-630 որոշումը, ՀՀՍԴՏ 2006/3

ՀՀ Սահմանադրական դատարանի թիվ ՍԴՈ-1213 որոշումը, ՀՀՊՏ 2015.06.17/34(1123).1 Հոդ.461.1

ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականի փետրվարի 21-ին թիվ ԵԿԴ/1274/02/13 քաղաքացիական գործով կայացրած որոշում:

ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ թիվ ԵԴ/9971/02/18 քաղաքացիական գործով 17.12.2020թ. կայացրած որոշում:

Մեղրյան, Ս. Գ. (2020) *Առաջին ատյանի դատարանի դատական ակտերի իրավաբանական բնույթը և որակական կայունության ապահովման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում,* ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 194 էջ:

Պետրոսյան, Ռ. Գ. (2012) *Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարություն,* չորրորդ հրատարակություն, Ոսկան Երևանցի, Երևան, 692 էջ:

References

Hayastani Hanrapetut'yan Sahmanadrut'yun [Constitution of the Republic of Armenia] (2015 t'vakani p'vop'vokhut'yunnerov), HHPT 2015.12.21/Hatuk t'vogharkum Hod. 1118 (In Arm.)

Hayastani Hanrapetut'yan k'aghak'ats'iakan datavarut'yan orensgirk' [Civil Procedure Code of the Republic of Armenia] (yndunvats՝ 09.02.2018t'.), HHPT 2018.03.05/16(1374) Hod.208 (In Arm.)

«Normativ iravakan akteri masin» HH orenk' [RA Law "On Normative Legal Acts"] (yndunvats՝ 21.03.2018t'.), HHPT 2018.03.28/23(1381) Hod.373 (In Arm.)

HH Sahmanadrakan datarani t'iv SDO-630 voroshumy [Resolution No. SDO-630 of the Constitutional Court of the Republic of Armenia], HHSDT 2006/3 (In Arm.)

HH Sahmanadrakan datarani t'iv SDO-1213 voroshumy [Resolution No. SDO-1213 of the Constitutional Court of the Republic of Armenia], HHPT 2015.06.17/34(1123).1 Hod.461.1 (In Arm.)

HH Vchrrabek datarani՝ 2020 t'vakani p'etrvari 21-in t'iv YeKD/1274/02/13 k'aghak'ats'iakan gortsov kayats'rats voroshum [Decision of the Court of Cassation on February 21, 2020 in civil case No. EKD/1274/02/13]: (In Arm.)

HH Vchrrabek datarani՝ t'iv YeD/9971/02/18 k'aghak'ats'iakan gortsov 17.12.2020t'. kayats'rats voroshum [RA Court of Cassation in civil case No. ED/9971/02/18 dated 12.17.2020 decision made]: (In Arm.)

Meghryan, S. G. (2020) *Arrajin atyani datarani datakan akteri iravabanakan bnuyt'y yev vorakakan kayunut'yan apahovman himnakhndirnery k'aghak'ats'iakan datavarut'yunum* [The legal nature of court acts of the court of first instance and the problems of ensuring qualitative stability in civil proceedings], YePH hratarakch'ut'yun, Yerevan, 194 ej: (In Arm.)

Petrosyan, RR. G. (2012) *Hayastani Hanrapetut'yan k'aghak'ats'iakan datavarut'yun* [Civil Procedure of the Republic of Armenia], ch'vorrord hratarakut'yun, Voskan Yerevants'i, Yerevan, 692 ej: (In Arm.)

Зорак Апресян
Преподаватель Международного университета Евразия,
кандидат юридических наук
Эл. адрес: zohrak.apresyan@gmail.com

ПРЕЮДИЦИАЛЬНАЯ СИЛА СУДЕБНЫХ АКТОВ В ГРАЖДАНСКОМ ПРОЦЕССЕ В УСЛОВИЯХ НАЛИЧИЯ ПРОТИВОРЕЧАЩИХ СУДЕБНЫХ АКТОВ, ВСТУПАВШИХ В ЗАКОННУЮ СИЛУ

Исполнение судебного акта, вступившего в законную силу, является гарантией права лица на справедливое судебное разбирательство, без которого значение деятельности судов было бы совершенно бессмысленным. Для этого следует попытаться исключить наличие противоречащих судебных актов, вступивших в законную силу. В статье говорится об институте преюдициальной

силы судебных актов и целях его установления в законе, а также анализируется действие преюдициальной силы и обязательности судебных актов при наличии вступивших в законную силу судебных актов, противоречащих друг другу. В работе представлены пробелы в законодательном регулировании института преюдициальной силы судебных актов, а также возможные неблагоприятные последствия, вызванные ими. Наряду с указанием на существующие проблемы, в статье представлены предложения, направленные на их решение. При этом обсуждается вопрос о конституционности законодательных норм, регулирующих институт преюдициальной силы судебных актов в гражданском процессе.

Ключевые слова: преюдициальная сила судебных актов, обязательность, окончательный судебный акт, законная сила, правовая определенность, исполнение судебного акта.

Zohrak Apresyan
Lecturer of the Law Department at Eurasia International University,
Ph.D. in Law
Email: zohrak.apresyan@gmail.com

PREJUDICIAL FORCE OF JUDICIAL ACTS IN CIVIL PROCEEDINGS DURING THE PRESENCE OF CONTRADICTING JUDICIAL ACTS ENTERED INTO LEGAL FORCE

The execution of a judicial act which entered into legal force is a guarantee of a person's right to a fair trial, without which activity of courts would be completely meaningless. That is why it is necessary to try to rule out the possibility of existence of contradicting judicial acts. The article deals with the institution of prejudicial force of judicial acts, the goals of its provision, and also presents analyses of operation of prejudicial force and bindingness of judicial acts in the presence of contradicting judicial acts that have come into force. The workanalyzes gaps in the legislative regulation of the institution of prejudicial force, as well as their possible negative consequences. Along with pointing out the existing problems, the article presents proposals to solve them. At the same time, the question of constitutionality of legislative norms regulating the institution of prejudicial force in civil procedure is being discussed.

Keywords: prejudicial force, bindingness, final judicial act, legal force, legal certainty, execution of judicial act.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2022թ. դեկտեմբերի 23-ին:
Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2022թ. դեկտեմբերի 26-ին:
Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2022թ. դեկտեմբերի 27-ին: